

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Եւրոպական Ծնունդի առիթով, Ն. Ամճ.
Պատրիարք Արքազան Հօր Կողմէ յշուած չեղուածու-
րականներու ի պատասխան, ստացուած են հետեւ-
եալ Հեռագիրները.—

31 Դեկտ. 1964, Վասիլիան

Ն. Ամենապատուաւրիսն
Եղիշէ Արքեպոս. Տէրուեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Զերմօրէն զգացուած ենք սաւր այս ե-
պահակի Զեր աւելացալիրէն։ Կը յայտնենք
մեր անկեղծ երախտագիտութիւնը Զերդ
Ամենապատուաւրեան և կ'ազօրենք որ
Աստուած լիովին օրինէ և պահէ Զեզ և Զեր
ժողովուրդը խաղաղութեան և Քրիստոնէա-
կան սիրոյ նոր տարուան ընթացքին։

ՊՕՂՈՍ Զ.

29 Դեկտ. 1964, Լիզարն

Ն. Ամենապատուաւրիսն
Եղիշէ Արքեպոս. Տէրուեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Մեծապէս զգացուած եմ Զերդ Ամենա-
պատուաւրեան բարեմաղթութիւններուն հա-
մար, որոնք ի բար սրտէ կը փոխադար-
ձեմ։

ԱԶԵՐԵՏՈ ԲԵՐՑԻԿԱԾ

29 Դեկտ. 1964, Լիզարն.

Ն. Ամենապատուաւրիսն
Եղիշէ Արքեպոս. Տէրուեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Խօրապէս շնորհակալ ենք Զերդ Ամե-
նապատուաւրեան բարեմաղթութիւններուն
և օրինութիւններուն համար։ Թող նոր
տարին Զեզի պարզեւէ ամենայն երջանկու-
թիւն։

ԵՍԱՅԱՆՆ-ՌՈՊԵՐ ԿԻՒԼ ԹԵՇԿԵԱՆ

Քրիստոսի Ա. Ծննդւան տօներուն առիթով,
Պատրիարք Ա. Հայրը ստացած է Հետեւեալ շնոր-
հական Հեռագիրները.—

18 Յունիար 1965, Ամճան

Ն. Ամենապատուաւրիսն
Եղիշէ Արքեպոս. Տէրուեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Հանոյքը ունիմ Ա. Ծննդեան տօներուն
առիթի Զերդ Ամենապատուաւրեան յայտ-
նելու անկեղծ բարեմաղթութիւններս ու
լաւագոյն շնորհաւորութիւններս, աղօքե-
լով որ Զեր օրերը ըլլան երջանկութեամբ
յորդուն և արդինաւոր։

ՊԱՀՃԱԹ ԹԱՎՀՈՒՆԻ
ՎԱՐՉԱՊԵՏ

6 Յունիար 1965, Ամճան

Ն. Ամենապատուաւրիսն
Եղիշէ Արքեպոս. Տէրուեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Խաղաղութեան և սիրոյ մարգարէն՝
Քրիստոսի ծննդեան սորին, Զերդ Ամե-
նապատուաւրեան կը ներկայացնեմ լա-
ւագոյն մազրաններս ու շնորհաւորու-
թիւններս, աղօքելով առ Աստուած Զեր
առողջութեան համար, և խնդրելով որ
Տէրը մեր հայրենիքն ու ժողովուրդը ար-
ժանացնէ երջանկութեան և բարօք կենաչի՝
Քրիստոսի Ծննդավայրին Պաշտպան Ն.
Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորի հո-
վանին տուկ։

ՀԱՊԵՍ ՄԱՃԱԿԻ
ԲԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ